ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 4304

« 03 » հունիսի 2024թ.

«Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Լ. ՋՈՒԼԱԿՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան Ֆրունզե 13)

Հարգելի՛ տիկին Ջուլակյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. մայիսի 17-ի որոշմամբ 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2024թ. մայիսի 27-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում չի բողոքարկվել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացնում եմ, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788